Ո՛վ ս̃բ Անաստասիոս քահանայդ բարձրելոյն. որ բեկանելի մարմնով, ո̃չ խուբի՛ ընդ հրոյ միաբանեալ՝ անարատ պահեցեր զկուսութիւն քո ընդ սրբուհի ամուսնոյդ զամս քառասուն։ Որև զուրուկն այսահար՝ հայրաբար խնամէիր։ Եւ՛ ՚ի պատարագելն քում, Հոգին ս̃բ ՚ի նշան արժանաւորութեան՝ երևելապէս վկայէր ՚ի տեսութիւն մե̃ծյն Նարսէի և այլոց։ Եւ՛ ս̃բդ Մարոս այցելութեամբ մե̃ծց վկայից. զորոց զոտսն համբուրէիր և արեամբ նոցա զաչս քո և զականջսդ դրոշմէիր. և ըստ փափաքանաց քոց վկայեալ՝ պսակեցար ՚ի ք̃սէ. Արդ՝ ընդ ձեզ ունիմք բարեխօս առ ա̃ծ և զայլ տօնախմբեցեալսն ՚ի մէնջ. աղօթեցէ՛ք վասն մեր ով ս̃բ վկայք՝ տալ մեզ զշնորհս ՚ի կեանս այս, և զփառս ընդ ձեզ ՚ի յարքայութեան ամէն.

*Սեւերիանոսի սեբաստացւոյն եպսլոյ·

Տ̃Ր մեր Յ̃ս Ք̃ս· զս̃բն Սեւե-
րիանոս սեբաստիոյ եպիս-
կոպոսն՝ ս̃բց վկայիցդ յորդորիչ,
և՛ի բանտի՝ ն̃ց կերակրիչ կացու-
ցեր· Որ արջառաջնօք տանջեցաւ·
քարամբք ՚ի բերանն հարաւ· քե-
րանօք քերեցաւ· և՛ի գոհանալոյ
զքեն ոչ դադարեցաւ· Դու ՚ի
ներքուստ զքան տայիր· և նա իւր
փողոյ ձնչէր արտաքուստ· վ̃ որոյ
ընկալար զնա ՚ի Թիւ ս̃բց · և վար
դապետական և կուսական և վը
կայական պսակօք պսակեցեր · և
հրաշիւք մեռելոյն յարուցման՝ զնա
փառաւորեցեր · Նա՛ զս̃բն Բա-
բիլաս դպիրն և ա̃ծպաշտութե
ուսուցիչն՝ ընդ ութսուն և չորից
աշակերտացն ընկալար քեզ ՚ի վը
կայս։ Սոցին բարեխօսութե̃ն տուր
և մեզ համբերութի ՚ի նեղութե ·
և վստահութի ՚ի համարձակ դա-
ւանութի անուան քում ՚ի կեանս



այս

այս․ և զփառս ՚ի հանդերձելումն
ամէն ։

---

* Ստեփաննոսի Հռոմայ Հայրապետին և այլոց ։

Տէր՝ որ զտէրն Ստեփաննոս Հայրապետն մեծին Հռոմայ․ պատճական ակամբք՝ վկայակցաց քահանայից, սարկաւագաց, և ժողովրդոց պսակ զարդարեալ՝ եդեր ՚ի գլուխ Եկեղեցւոյ քո սրբոյ ։ Զոր յառաքելական աթոռ սրբոյն պետրոսի արժանացուցեր բազմիլ․ որոյ սերմն վարդապետութեան՝ բուսոյց քեզ հասկս ուրախութեան․ զտէրն Նեմեսիոս և զդուստրն նորա զլոր բուհի կոյսն Լուկիա․ որք արեամբ իւրեանց վկայեցին ․ և շուշանազարդ կոյսն Լուկիա՝ իբրև ըզ կարմրագոյն վարդ զարդարեցեր զեկեղեցի քո․ Իսկ արթուն հովիւն հոգւոց տէրն Ստեփաննոս՝ յանմահ զենման պատրաստին քոյ, ընդքեզ զենեալ․ զորոյ արիւնն ընդ-

 ա

արեանդ խառնիլ հաճեցար ։
Որդ՝ ՚ի բազմաթիւ վկայիցդ տօնախմբութն, ընկալ և զմերս պատարագ աղօթից․ և արժանի արա երկնաւոր պսակիդ արքայութն ամէն ։

---

* Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի, և Պօղոսի Խոստովանողին ։

Զսուրբն Մետրոփանոս զհայրապետն առաքելաշնորհ և մարգարէապատիւ՝ ներբողական երգով և գովութեամբ պատուեմք ․ որ աղօթիւք իւրովք օգնեալ մեծին Կոստանդիանոսի՝ յաղթող արար զնա ամբարշտին Լիկինիանոսի ։
Նաև զսուրբն Աղեքսանդրոս որ ծառայեաց զուղղափառ հաւատոյն Նիկիոյ սբ ժողովոյն յամ շրջակայսն Կոստանդնուպօլսի։ Նաև զսուրբն Պօղոս զմեծ խոստովանողն քո ․ և զպատուական վկայն ընդ իւրոց սբց նօտարացն վկայից․ Նաև դու Տէր ընկալ զտօնս մեր ՚ի պատիւ

 սբց

մէջ Հայրապետաց քոց և վկայից.
և զուղղափառ հաւատն Նիկիոյ սբ
ժողովյն 'ի փառս ածութե քոյ,
հաստատուն պահեա յեկեղեցւոջ
մինչև 'ի կատարած ժի .

---

* Յօհաննու Ոսկեբերանին .

Ոսկեբերանն Յօհաննէս՝ ըղ
տիեզերալոյս վարդապետն .
և զապաշխարողաց երաշխաւոր ըղ
գերամբ Հայրպետն գովելով տօ_
նախմբեմք, Որ հաւասար Առա
քելոց քոց Տր Յս արդիւնաւո
րեաց յեկեղեցի քո . Թարգմանե_
լով և մեկնելով զհին և զնոր կը
տակարանս 'ի լուսաւորուի ման_
կանց մէջ Սիոնի . Որ 'ի մարմնի
զանմարմնոցն եբեր յինքեն զհան
դէս . և զերկնայինս և զերկրա_
ւորս կացոյց 'ի սոսկալի հիացման.
Զորոյ հանգստեանն առ քեզ ըղ
յիշատակ տօնախմբէ եկեղեցի քո.
Որ տեսութե քով զմայլեալ յար
քայութե քում, աղօթէ վս մեր


առ

առ քեզ · դառնալ մեզ յապաշխա
րութի և ստանալ զկեանս յաւի
տենականս ։ Ուրեմն լո՛ւր տր ա_
ղաչանաց գերազնիւ ծառայի քոյ,
և հա՛ն զմեզ 'ի խաւարէ 'ի լոյս հա
ճոյական կամաց քոց 'ի կեանս այս·
տալով զփառս քո 'ի հանդերձե_
լումն ամէն ։

---

*'Ի ՏՕՆԻ ՓԻԼԻՊՊՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ ։

Տէ՛ր մեր Յս՟ Քս՟ ճառագայթ
և կերպարան Հօր · որ ըզ
միութի քո բնութե ընդ Հօրդ ան_
ըսկզբնականիդ՝ խնդրանօք սրբոյն
Փիլիպպոսի Առաքելոյն քոյ մեզ
ծանուցեր · թէ ով որ տեսանէ
հաւատով զճառագայթդ Հօր, տե
սանէ զիմանալի արեգակն զՀայր
քո և զած մեր։ Վասն տր մեր յս՟
որդի և բան Հօր· զօրացուցեր ըզ
սբ Առաքեալն քո յորդաբուղխ
բանիւ վարդապետութե ·'ի հրաշս
և 'ի սքանչելիս · որ ձեռին դըր_
մամբն՝ զբազմաժամանակեայ կոշ


կո

կոծեալն 'ի մահճի, և զաչացան՝ անոռամբ քով բժշկեաց։ Պանեցան մինչև 'ի մահ. պարանան քարշեցան 'ի մեհեան կռոցն. և զնոսին միայն բանիւն խորտակեաց. Պչխիվայր կախեցան ըստ պետրոսի. վարդապետելով անդէն 'ի կախաղանին. հաստատելով զաշակերտեալսն 'ի հաւատ քո տէր. Արդ՝ 'ի տօնախմբութեան աւուր՝ բարեխօսութեամբ սրբոյ Առաքելոյն քոյ Փիլիպպոսի, զքեզ 'ի միտ մեր պայծառացո տէր յս. զի լուսով ճառագայթիւ հոր՝ զհայր քո երկնաւոր աստ հաւատով, և 'ի հանդերձելումն դէմ յանդիման տեսանելոյ արժանասցուք ամէն.

---

* 'Ի տօնի առաքելոյն Սիմ.

ՍՐԲ. ՍՐԲ. ՍՐԲ. և ամենասուրբ ես դու Սուրբ Երրորդութիւն. որ գերասրբութեամբ քով՝ 'ի յաւիտենից զնախասահմանեալսն 'ի քեն՝ ստեղծեր 'ի ժամանակի. զերկնայինսն և

և զերկրաւորսն․ և շնորհիւ քոյ
արժանացուցեր․ կոչեցեր, արդա
րացուցեր, և փառաւորեցեր․
Ո՜վ յսօր ողջունեն զքեզ ամ սբք
քո․ և մեք ողջունեմք զնա տօնա_
խմբելով․ Ո՜վ յսօր եկեղեցի քո՛
եղեն աստեղայից երկնի․ և իբրև
զդրախտ ածատունկ անմահ պտո_
ղովք բոյսք ամ սբովք զարդարին․
զորս առ քեզ ունիմք բարեխօս․
որ զանման զնոսա դու գիտես, և
թուես, և յանուանէ կոչես․
Մեծարու բարեկամացդ իբրև
զաւազ ծովու բազմացելոց աղօ_
թիւքն և բարեխօսութիւն, անձեցո՛
տր․ Հաստատեա՛․ և սրբուն ամ
սբց քոց՝ մասնակից զմեզ արա՛։
Եւ ՚ի հոգևորական մարտի մերոյ
ընդ աշխարհակալին սատանայի՝ յաղ
թողացդ սբց օգնութեն՝ զմեզ
կարողացո՛․ և քեզ փառք
յաւիտեանս
ամէն։

* Ընծայման Ածածնին ՚ի Տաճարն ·

Կանխատեսութե՛ զմայր քո ընտրեալ քեզ ՚ի ծնողուն Տր Յհ· երեքամեայ ՚ի տաճարն սբ ընծայեցեալ՝ ընկալար · և երգակից երկնաւորդ քոց զօրաց հաճեցիր առնել, զի ոպ և էրն ՚ի յաւիտենից քեզ ՚ի զուարձութի ըստ նախատեսութեդ, եղիցի և ՚ի ժամանակի ցնծութի եղեմի· փրկութի նորս խնճլի· և պարծանք ազգի մարդկան · Օ երանեցլն յամ ազգաց յաւուր ՚ի տաճար ընծայման՝ խոնարհաբար ողջունեմք · և խընդրեմք ՚ի քէն որ յմ, զի անդառնալի բարեխօսութե մօր քո և կուսի, ներեսցես մեղաց մերոց· տացես զշնորհս ՚ի կեանս այս, և ըղփառս ՚ի հանդերձելումն ամէն ·

---

* Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին, և Միւռոնայ Լիւկիացւոց ։

Բն Որդի Այ կենդանւոյ ·

զԿաթողիկէ Եկեղեցւոյ պայծառացուցիչսն, և զառաքինութեն տապանական վկայութե, զսբն Գրիգոր Սքանչելագործն. Սոր քոյ Միածնի հրամանաւն լուսաւորեալ փայլեցուցեր կրթութե սբյն Յօհննու Ոտրնչի. Ո՛ գրպարտիչ նր զկինն պոռնիկ՝ այսոց չարաց հրամայեցեր լլկել. և նա ըղդուսն՝ յանուն քո առնէր հալածական ՚ի յանդունդս. Ո՛ վէմ ՚ի տեղւոջէն միայն բանիւ փոխեց. Ո՛ լեառն պատճառ վիճման ցամաքեցուցեալ, և զանհաշտսն այնուընդ միմեանս հաշտեցուցանէր.
Գաւազանաւն զգայլն գետ՝ յեզերացն յորդեցմանէ և յաներմանէ սահմանացն դադարեցուցեր. Ո՛ հրէայն սուտ մեռեալ՝ դարձուցանէր ՚ի ճշմարիտ մեռեալ. զոր բազում և այլ ՚ի վեր քան զմիտս հրաշիւք փայլեցուցեր ՚ի կեանս և՚ի մահ. Ընդ նմին, սքանչելագործութե փայլեցուցեալ պայծա



ռա

ռածուցեր և զմեծն և զորբն ՚ի Նի-
կողայոս հայրապետն. և զՍի-
ռօն եպսկն կիպրոսի ՚ի վկայու-թ
իւր հաճատոյ նշ և վարուց առա-
քինութե. զորս առ քեզ ունիմք
բարեխօս. խնայեա՛ ՚ի մեզ տր
և կեցո՛ :

---

* Սրբուհեացն Յուլիանեայ և Սօ-
փրոնեայ.

Շուշան ծաղկեալ կուսութե-
սրբուհին Յուլիանէ՝ Ճշ-
մտեայ Փեսի Քի մեր. առ ոտն է-
հար զաշխարհ և զմարմինն. և ըզ-
սատանայ իբրև զմարմնաւոր ոք
նկուն արարեալ՝ շղթայիւք կա-
պեաց. Նա՛ հուր սիրոյ սրտի նր
եւլ չիջուցին զգալի հրոյ. և ՚ի
հոտ անոյշ կուսութե իւրոյ՝ ըզ-
բազումս քարշեաց և քեզ ՚ի հա-
ճատն ընծայեաց. և զգլուխն մր
գլխոյդ նւիրեաց, զի անթառամ
լի պսակաւ պսակեսցի. Զ որ ընդ-
Սոփրոնեայ սրբուհւոյ կուսին

առ քեզ ունիմք բարեխօս Քս̃ Ած̃-
մեր. Որով սրբոյդ զմեզ բոլոր-
քեա՛. և զհարսնացեալ հոգի մեր՝
ընդ երկնաւոր փեսայիդ միաւո-
րեա՛ յերկինս ամէն.

---

*Առաքելոյն Յակոբայ և Յովհաննու.

Հիմն Եկեղեցւոյ Յս̃ Քս̃ և արմատ անմահութե̃. որ վէմ հաստատուն եղեր հնոյ և նախկնոյ եկեղեցւոյ քո զարդարն Յակոբոս. զընտրեալն և զմաքրեալն յարգանտէ. զոր և եղբայր քեզ հաճեցար կոչել. որ զԹիւ հաւատացելոց ՚ի հրէից՝ տասամբք բիւրօք քեզ նուիրեաց նախարմտիւ. Որ նազօրացի և ուխտաւոր գոլով Տն̃ յօհաննու մկրտչի՝ զգինի և զօղի ոչ էարբ. ածելեաւ ոչ գերծաւ. և ընդ հուր անցեալ կերակուր ոչ եկեր. և յաշտարակէ տաճարին՝ զքեզ դուռն երկնից խոստովանելով՝ հոլովեալ ՚ի ձորն, թափչաց մականաւ կառափնատեցաւ.

Ընդ նմին և եղբայր նր Շմա_
ւօն սբ առաքեալն քեզ ազգական
կոչեցեալն · զոր 'ի թունաւոր և
մահացու դեղոյն արբմանէ՝ ան_
վնաս պահեցեր քս խոստման քո։
որ քեզ խաչակցն՝ յերկուս կողմն
խոցեցաւ․ և իբր ցորեն յարքայու
թեան շտեմարանեցաւ։ Սորա ա_
ղօթիւքն խնդրեմք 'ի քէն տէր ·
տուր մեզ զյարատեւութիւն յառա_
քինութեան · զթողութիւն մեղաց · և
զշնորհ 'ի կեանս այս, և զփառս
'ի հանդերձելումն ամէն։

---

* Անդրէի Նախակոչ Առաքելոյն ·

ՏՐ ՅՍ իմանալի լոյս · որ յա_
րուսեկիդ աշակերտութէ ան
ըստուէր արեգականդ յաշակեր
տութէ կոչեցեր զսբն Անդրէաս՝
զեղբայր վիմին հաւատոյ · որոյ և
կոչմանն առ քեզ՝ հրաւիրակ կա_
ցուցեր զԱնդրէաս։ Նա աւետա
րանչին քո սբյն Մատթէոսի՝ ա_
ղաւիչ առաքեցեր յաշխարհն մար


դա

դալկերաց. Որ զմոլորելոց միտսն ուշաբերեցաց. զկոյրսն լուսաւո–րեցաց. զձորացեալ զանազան խուր՝ անսպառ թզով պտղաբերեցաց. ըղ դեսն հալածեաց. և պարանաւ ը̂ փողոցս քարշեցեալ տորորեցաւ. յորոյ կաթուածոյ արեննն՝ ծառս պտղաբերս բուսուցեր. և դու ինքնին զվէրս մարմնոյն բժշկե–ցեր. Ո՛ քաղաքն Սինոպ՝ քարոզու–թեամբ նր̅ առ քեզ դարձուցեր. Աւ անդրաբերեալ զնա 'ի բիւ–զանդիայ՝ աւետարանեցեր նովաւ զքոյդ ա̅ծութի. և փոխեալ զնա յելլադայ աւետարանել զքեզ։ Ուր յեգիպտեայ դատաւորէ լսա–չեցեալ՝ զխաչն գովեալ դրոշմա–տեաց. և գիրկս արկեալ համ–բուրեաց. որ զիւր նման պտուղ քեզ ընծայէր յա̅ քս̅։ Որդ՝ յա–ւուր տօնախմբութն ս̅ըն Անդ–րէի նախակոչ առաքելոյն. քոյ, ա–զատեա՛ զմեզ 'ի մարդադէմ գազա–նաբարոյութենէ. ուշաբերեա՛ զմեզ

 ըստ

ըստ կարգի բանականաց. տուր մեզ զշնորհս քո ՚ի կեանս այս եւ զփառս ՚ի հանդերձելումն ամէն։

* Գուէնարիոսի Լաշկարին, եւ Մերկեւ‿ րիոսի Ոսկեբերանին.

Ո՜ սբն Մերկեւրիոս՝ գովելով դրօշատեմք Քի. զայր եւ զնմանն սիրոյ մարտիրէին քոյ դա‿ թի. զխարտեաշն հերաք. զգեղե‿ ցիկն աչաք, եւ զվայելուչն հասա‿ կան։ Իսկ ըստ հոգւոյն, զսբն սըր‿ տին. զլուսաշարժելն հանատով. զմաքուր կուսանն համեստաբա‿ րոյ. որ արժանի էր քեզ լինել վը‿ կայ։ Սրբոյ լորսայս պնդեցան. կայծականմբք ՚ի ներքուստ խորո‿ վեցան. սրով կտրատեցան. եւ ՚ի հրեշտակէ քո ողջացան. որով եւ դեպոսում քեզ աշակերտեաց։ Գլխիվայր կախեցան. եւ վիմօք ՚ի պարանոցն կապեցան. եւ քոյդ զօ‿ րութբ մնաց անվնաս։ Լեւ գլխոյդ փոխան գլխատեալ՝ զգլուխն քեզ



նը

նուիրեաց, զի դու պսակէիր զնա կրկին պսակաւ կուսութեն և վը-կայութեան. զորս յայտ արարին սպիտականալ սբ մրմնոյն, և բու-րումն անուշահոտութեն վարդի և խնկոյ. որովք և զբազումս քեզ բուսոյց միայնակ ցորեանն մեռեալ և՚ի բազումս բողբոջեալ։ Սովիմբ եբարձ զնախատինս քո. մայր և կոյս սրբուհի Ածամայր քո՝ սա-տակմամբն ուրացողին յուլիանո-սի. Ո՛ որ ընդ սմին Գենարիոսի եպսկսին քոյ և վկային, առ քեզ ունիմք բարեխօս. խնայեա՛ ՚ի մեզ տր և կեցո.

---

* Յակովբայ և Մարութայ.

Սրբն Յակովբի՝ ոսկեհատ ծա-ղիկ և անձամբն գեղեցիկ. գեր քան զարմանենեաց ՚ի ծաղ-կազարդին՝ զոստս մարմնոյն դառն չարչարանօք քեզ ընծայեաց. զի դու պսակէիր մի մի զամ յօշատել անդամունսն նր. Ընդ նմին և

 զկրա

զՍրբափառ վկայնքո՝ բարեխօս ունիմք առ Հանդիսադիրդ սրբոց վկայից. զտօնասէր ծառայքս քո՝ պսակեա՛ ընդ նմին առանց գանից և տանջանաց ամէն.

---

* Սրբոց Հարց Անապատաւորաց.

Որք 'ի մարմնի զանմարմնոցն բերէք 'ի ձեզ զհանդէս. և փայտեայ զինուք՝ զպողովատիկ զէնս չարին հողմով հոսեցիք. և երբև զխունկ 'ի բաց մերժեցիք ով մեր Հայրք միանձունք. Ըստ եղիայի, և յօհաննու մկրտչի յանապատի ըն այ եղեալք խոսակիցք. Քաղցու և ծարաւու ըստ ամն յի, սատանայական փորձութեցն եղեալք նահանջիչք. Այլ միայն անեռաբանական կրթութե՝ գեր քան զամ փիլիսոփայս՝ 'ի հարց և 'ի պատախանիս գտայք վեհագոյնք ով մեծուսոյց երանելի Հայրք. և որք ըռունք զօրանորք՝ զարքայութին երկնից յափշտակեցիք. Արդ՝ վն



ձեր

ձեր տօնողացս խնդրեցէ՛ք 'ի տ̄նէ զարիութ̄ի 'ի հոգևոր պատերազմի. ընդ ձեզ դասակցել և զմեզ ողորմութ̄բ իւրով. օրհնել և գովել զնա յաւիտ̄նս յաւիտ̄նց ամէն.

---

* Նիկողայոսի Միւռոնոյ Հայրպ̄տին.

Տէր մեր Յ̄ս Ք̄ս. որ առնես զհրաշակերտս և զմեծամեծս 'ի վեր քան զբնութ̄ի և զմիտս. Դու շտեմարան և տապանակ զանազան սքանչելեաց կացուցեր ըղ մ̄բն Նիկողայոս զմիւռնոյ Հայրապետն 'ի մանկութենէ. Որ զգօսացեալս բժշկեաց. զցամաքեալ աղբիւրն՝ ցուրտ և բարեհամ բըղխեցոյց. Զհաց և զգինի 'ի բաւականութ̄ի բազմաթիւ ժողովրդեան՝ ըստ քեզ աճեցոյց. և դու զնա աւետարանական հացիւ նըշանագրեցեր. և մայր քո եմիփորոնաւ զնա կնքէր 'ի նշան եպիսկոպոսութ̄ե. 'Ի սովուն զքաղաքն զմիւռին՝ լիութ̄բ խնամարկեաց.

յաւէկոծուէ՝ զմիայն յիշօղս ան-
ուան իւրոյ փրկեաց. 'ի զրպարտու-
թէ զբանտարկեալսն ազատեաց.
և այլ անթիւ հրաշիւք զծառայն
քո զսուրբն Նիկողայոս յերկրի և
յերկինս փառաւորեցեր. Նմա մեք
գովելով զնա փառաւորեմք. և նո
րին բարեխօսութեամբն խնդրեմք 'ի
քէն զթողութիւն մեղաց, զհեղումն
շնորհաց, և 'ի հանդերձելումն ըղ
պարգևս փառաց.

---

* 'Ի տօնի Յովակիմայ Աննայի.

Զկանխաւ նկարեալն 'ի միտս քո
Տր Ած. զփառաւորեալ
Տիրուհին մեր, և զթագուհին հր
րեշտակաց. այսօր յադինական ար
գանդի դրախտի սրբուհւոյն Ան
նայի անկեցեր ծառ. որ 'ի ժամա
նակի ետ մեզ զպտուղն կենաց
պայծառ. Յարևու հարեր զխո
րան քո, և անաղտաբար նկարեցեր
զտիպն հրաշալի արգանդին աննայի
'ի սքանչացումն երկնաւորաց և


երկ

երկրաւորաց։ Որոյ գեղեցկութին շնորհն եւ կատարելութին՝ վարագուրաւ ’ի քէն ծածկեցան գեր քան զՄովսէսին քօղով. զի կարէաք թերեւս մեք նմին դիմաւորիլ. եւ զաղերս մեր՝ նմին ընծայել քեզ ’ի հաճութին. զնա ունելով մեղուցեալքս ապաստան։ Ուստի վ̃ նորին արդեանցն աղաչեմք զքեզ խնայեա ’ի մեզ եւ կեցո։

---

* Բարթուղիմէոսի եւ Թադէոսի,

Տէր մեր Յս̃ Քս̃ լոյս աշխարհի. որ առաջին լուսաւորիչ Հայաստանեայցս ազգի՝ առաքեցեր զքո Առաքեալսն քո զԲարդուղիմէոս եւ զԹադէոս. որք իբրեւ զերկու լծակս տապանակին վըկայութեն, զտապանակդ քո̃ բարձեալ՝ բերին մեզ ’ի փրկութին. Նոքա զկռոցն սնոտի խաբէութին, եւ զքոյդ միայն Ճշմարիտ ա̃ծութին, արժանաւոր երկրպագութեն մեզ քարոզեցին. Նոքա զերկնային բա-

ժամ հոգւոյդ ս՟բ՝ ոսկեղէն բաժակաւ անձամբք իւրեանց մեզ մատռուակեցին · և հայրատունկ այգւոյ քո՝ զոր յեգիպտական խաւարէ հանե՟լ տնկեցեր 'ի տեղւոջ պարարտութե՟ն , զնոսին արարեր հրեղէն պարիսպս և բարձր աշտարակս· Որոց արեամբ ոռոգեցեր զայգի եկեղեցւոյս հայաստանեայց· և սերմամբ ս՟բ արեան ն՟ց, զհարիւրաւորս բուսուցեր քեզ 'ի պաշտօնեայս և յերկրպագուս· Արդ աղաչեմք զքեզ տ՟ր, վ՟ս սիրոյդ որ առ հոգևոր ծնօղսն մեր, ողորմեա մեղուցեալ որդւոց քոց և ն՟ց·'ի մեղաց քաւեա, շնորհիւ քով զար դարեա, և հանդերձեալ փառացդ արժանաւորեա ամէն·

* Ս՟բյն Մինասայ, Լոռնգինեայ, և Գարոբոսի·

ՏԷՐ Յ՟ս խաղաղարար ա՟մ ծի· զս՟բն Մինաս զխաղաղութե՟ն միջնորդ, և զնախանձաւորն պար



կեշտ

կեշտ վարուց քրիստոնէականի ,
հաներ 'ի նաւահանգիստ խաղա-
ղութե՟ հաւատոյ քո ։ Որ փոյթ
գտաւ 'ի բարեպաշտութ՟ի , և առ
աղքատս գթածագոյն ։ Ո՜ հա-
տեալ լեզուն քեզ քաղցրաձայնից,
և զոտսն և զաչսն 'ի քեզ ամբար
ձօղ՝ առողջացուցեր ։ Եւ զԵր-
մոգինէս եպարքոսն՝ աղօթիւք ն՟ր
յեպիսկոպոսութ՟ի փոխարկեցեր ․
և կռոցն սնոտեաց՝ կործանիչ կար
գեցեր ։ Հրեշտակին քով զնոսա
զօրացուցեր ։ և զԵրմոգինեայ հա
տեալ անդամսն և զմոխրացեալ
մարմինն՝ հրեշտ՟կին քով 'ի կեանս
փոխեցեր ։ Եւ զոբ վկայն քո ըղ
Ս՛ինաս՝ 'ի կախաղանէն և 'ի բան
տէն զերծուցեալ՝ յանդիմանիչ
ամբարշտին Մաքսիմիանոսի յատե
նին կացուցեր ։ Ո՜ որ Պրաբոսն
երանելի՝ նոտար վկային քո սբյն
Ս՛ինասայ՝ զանձին զտկարութին
յանդիմանելով՝ վ՟ա անուան քո
պսակեցաւ վկայական մահուամբ


ընդ

ընդ Մ՝ինասայ և Երմոգինեայ.
Զորոց և զնշխարսն՝ երկաթեայ տապանաւ ՚ի ծով ընկեցին, ըստ խնդրոյ նոցա ՚ի բիւզանդիա հասուցեր. և զպիղծն մաքսիմիանոս հրեշտակին քով չարամահ սատակեցեր. Արդ՝ ընդ երջանկացդ վկայից՝ առ քեզ ունիմք բարեխօս և վն քոյ զկամաւ աղքատացելսն. զսբն Աղէքսիանոս և զսբն Յօհաննէս. Ընկա՛լ տէր զաղաչանս մեր. և հա՛ն մեզ մասն ժառանգութեան ընդ սբս քո ամ. այժմ և՛ի հանդերձելումն ամէն։

(Եւստրատիոսեանցն՝ զհասարակ մարտիրոսացն ասա՛.)

*Յակոբայ Մծբնայ Հայրապետին.

Զմեծն Յակոբ Մծբնայ Հայրապետն՝ երգով ցնծութեան տօնեմք. և զքեզ փառաւորեմք Տր Յս. որ այնպիսւոյ ծառայի տէր ես տրդ զօրութեց. Որ ըստ մովսէսի խաչաբարձ, ըստ յօհաննու

յանապատէ կոչեցեալ ձայն բար
բառոյ, ըստ պետրոսի հոլիւ շը
նորհեալ յոյ· Ոստ քեզ՝ բըղխ-
մամբ իւր ՟բ արտասուացն, կե-
նագործօղ մռռելոց· Յանջրդողջ
ջուր բղխեցուցիչ· հերյացն աղբը
կանց վ̄ անամօթութն̃ց այլայլից·
Ո՛վ որ ոչ կարօտիւր ձեռնքո ա-
մենազօր առաքել աւիւծս և հը
րաշունչ օձս կոտորիչս՝ առ'ի պատ
ժել գչապուհ ո՞յ զվարածն շա-
նաձանձիւն, գոռեխան և պիծա-
կան զնա աղօթիւք գերամբ ծա
ռայի քո հալածեցեր· և այլովք
բազմօք հրաշիւք՝ զծառայն իբրև
գործիք քեզ, և իբր ձեռինդ գա
նազան փառաւորեցեր· Ո՛ որ ը̄
Ս՟ Եղիսոսի եպիսկոպին և Ս՟արու-
գէի ճգնաւորին առ քեզ ունիմք
բարեխօս· զարժանահաս մահտա
րաժամն 'ի ցասմանէ քում հրա-
մանի՝ բարձ'ի մէնջ աղօթիւք նբա
րեխօսութեամբ տօնախմբեցեալ
երջանկացն՝ և հան մեզ մասն յե-


րա

րանութենդ քումմէ տէր յմ զքեզ աղաչեմք ։

---

*Իգնատիոսի Աստուածազգեաց Հայրապետին ․

Տէր Յս Քս ․ դու յառաջատեսութ[իւ] քով՝ յընտրութի և՚ի կոչումն սրբոյն Իգնատիոսի նըկատելով , զնա ՚ի գիրկս ընկալեր՝ արքայութեանդ արժանաւոր ժառանգ լինիլ կնքեցեր ․ Որ աշակերտեալ սիրելւոյն քո Յօհաննու աւետարանչին՝ եպիսկոպոս անտիոքայ ՚ի նմանէ ձեռնադրեցաւ ․ ՚Ի գրկակալելն քո՝ հրով սիրոյդ բորբոքեալ՝ բազմաց զառ՚ի քեզ հաւատոցն և փրկութեանն եղև պատճառ ․ Որ զբեռն նաւի մարմնոյն՝ իբր յալէկոծուէ ըմբռնեալ՝ կամէր ՚ի ծով թօթափել ․ և որպէս զեղջերու հըգուով ծարաւիւր առ քեզ գալ ․ և գազանաց ժանիւք աղացեալ՝ հաց սբ ցանկայր լինիլ քեզ ․ որ եղեն իսկ ․ Սրբոյ պսակեցեր զնա էռարփեան պսակաւ ․ կուսութե,


վար

վարդապետութեն, և մարտիրոսութեն, զոր առ քեզ ունիմք բարեխօս ։ և զտօնախմբօղքս գրեա՛ 'ի գիրդ կենաց. տալով զշնորհս մեզ 'ի կենս այս, և զփառս քո 'ի հանդերձե֊լումն ամէն ։

---

* Ադդէի Հայրապետին, և Աբգարու Թագաւորին ։

Դու քհնայապետ յաւիտենից, և Թագաւոր երկնի և երկրի Տր Յս Քս. պայծառացուցեր զքահանայապետութի քո 'ի սբն Ադդէ Հայրապետն, և զԹագա֊ւորութի քո 'ի նախընծայ Թագաւորն քեզ հաւատացեալ 'ի սուրբն Աբգարոս. Զոր և 'ի կրկին բռնութենէ ազատեցեր. անձեռա֊գործ ածատիպ պատկերաւդ, և քարոզութբ և Մկրտելովն Թա֊դէոսի առաքելոյ քո. և մեր նախ֊կին լուսաւորչին. զԱբգարոս գովեմք՝ զսիրողդ քո անփոխելի ոս կեզօծ տապանակն և զբարեպաշ տու

տուն նախանձայուզն։ Որ առա-
քելաբար՝ փոխանակ իւրն գնալոյ՝
զպատգամս հրովարտակաց առա-
քելով՝ զմն. ծածուկ Թագաւորին
յերկրպագութիւն քեզ հրաւիրէր.
և արգիլեցուցմամբ հալածանաց՝
զոր Աւետարանն քո 'ի տիեզերս ծա-
ւալէր. զոր և երկնաւորդ Թագա-
ւորութեան արժանացուցեր։ Որոց
աղօթիւքն խնայեա՛ 'ի մեզ. և ըզ-
լոյսն 'ի ծառայից առ մեզ վառե-
ցեալ՝ անշէջ պահեա՛ միշտ։ և քեզ
փառք յաւիտեանս ամէն։

---

* Պօղինայի Սրբուհւոյն, և Անդրոսի Ներ-
քինոյն, և Լորենտոս Բեթուրոյն։

Սրբուհի կոյսն Պօղինաս աղա-
խին քո Տր. ընդ Անդրոսի Ներ-
քինւոյն՝ ներքսապէս լուսաւո-
րեալք անմիջապէս 'ի հոգւոյդ սբյ՝
հաւատացին 'ի քեզ և մկրտեցան։
զորս 'ի բանտին հրեշտակիւ քով
կերակրեցեր։ Ո՛ Ներքինին Ան-
դրոս 'ի ծով ընկեցեալ՝ ընկալար 'ի

վկայս. և զորբուհին Պօմնաս ըղ-
շուշանն սպիտակ՝ կարմրերփեան
արեամբն ներկեցել՝ գլխոյն համ-
մամբ պսակեցեր կուսական և վը-
կայական պսակաւ. Ընդ նոսին և
զերկուց բիւրուցն ընդ Պողերի-
կեայ քահանայի տօնախմբելով ե-
կեղեցի՝ մասին շնորհաց և փառաց
նոցին յուսալով աղաչէ և ասէ.
տո՛ւր մեզ տր զոր 'ի քէն զշնորհ
հայցեմք. և հրամայեա՛ զոր կամիս.
և քեզ փառք 'ի յա՛տնս ամէն.

---

* Սրբոյն Լուսաւորչի Հայրապետին և այլոց:

Լոյս անստուեր և իմանալի Տր Յս. լոյս աշխարհի կոչեցեր զմբ Լուսաւորչն քո, և նոցին համածագօղ զմբն Նասիլիոս եօթնալոյս Հայրապետն մեծին կեսարիոյ. Որ բանիւ որոտայր, և գործովն փայլիւր. Գնաց ահարկու եղեալ, և հրեշտակաց զուարճալի. Հոգւոյդ մէջ ընտելական, և աներկիւղ 'ի բռնաւորաց. Լուծաշունչ

գրոց բանալի, և՛ի սքանչելիս զար
մանագործ։ Որ անմարմնապէս 'ի
մարմնի կենցաղավարելով՝ ըզ մա-
քուր հոգին՝ որ 'ի քէն յանձնե-
ցաւ՝ ծնգապատիկ արդիւնաւորել
քեզ յանձնեաց 'ի պսակել։ Ընդ-
նմին ունիմք բարեխօս և զեղբայր
նր̃ զսբն Գրիգոր նիւսացի՝ զե-
ռափեան վարդպտն եկեղեցւոյ
զուղիղ քանոնն ճշմարտութե և
զջատագովին կուսութե․ և զսբն
Սեղբեստրոս՝ զկնի Պետրոսի և
Պօղոսի զերկրորդ լուսաւորիչն ա-
րևմտեան աշխարհի․ և զսբն Եփ-
րեմ, զվարդապետն և զդպրապտն
հին և նոր կտակարանաց ։ Որոց
'ի տօնախմբութեն աւուր և յամ
ՅՃակի, լու՛ր տր․ հայեա՛ց քաղցր
ակամբք քով 'ի ջերմեռանդութի
եկեղեցւոյ քոյ․ և հա՛ն մեզ զմասն
ընդ տօնախմբեալ սիրելեաց քոց․
տալով մեզ զշնորհս 'ի կեանս այս,
և զփառս քո 'ի հանդերձեալումն
ամէն ։

* ’Ի ծանօս Ճաշու Պորտոյն ։

ՏԷՐ մեր · որ զմարգա–
րէս քո իբրև զխօսնակ ’ի
գիշերի հնոյ օրինաց՝ ձայ–
նատու և գուշակիչ գալստեանդ
արեգական և աննետատուս կացու–
ցեր · և զքո առաքեալսն քո՝ նոցին
ստուերագրութեցն յայտնաբա–
նիչս և թարգմանիչս ցուցեր ։
Այլ զքո անեդորդ ’ի լրումն ժմի
և գլուխ ածագործ ածաբանու–
թեդ՝ ’ի վր բարձու լերին բեմբի
քոյ եկեղեցւոյ ընթեռնուլ՝ յոտին
կանգնեցմամբ և լապտերաց լուց
մամբք սահմանեցեր։ Համաձայ–
նեցո տր և զմիտս մեր յերկուսին
օրէնս՝ միով հոգւովդ քով սբվ
հնչեցեալսն · զի զստուեր հնոյն ’ի
նորս շնորհ անդրափոխեալ հաւա–
տասցուք · և նոր օրինացդ սիրով
բորբոքել ու զամբարաց լուցելոց,



և

և տք աւետրնիդ հրամանաց կա-
տարման, պատրաստութե մեծա-
յորին կանգնիցուք ասելով, Հը-
րամայեա տր զի լինիցուք մեք ծա-
ռայք քո. Եւ յառաջեցո զմեզ
ամն ջերմեռանդութե ՚ի կատա-
րումն շնորհական օրինաց քոց. և
գրեա զմեզ ՚ի թիւս պատուիրա-
նապահից ծառայից. որպս զի և
մեք զքեզ սիրողաց մասնակից
լիցուք: Զի դու հրամայեցեր՝
թէ որ ունի զպատուիրանս իմ և
պահէ զնս, նա է որ սիրէ զիս.
զի դու ես միայնակ արժանի սի-
րոյ, օրհնութե, գոհութե և գո-
վութե. այժմ և յաւիտեանս յաւի-
տենից ամէն.

* Ընծայաբերութեան.

Տէր մեր յս քս. զայս նուիրացս
կատարումն՝ մեզ տացես տե-
սանել. հասուցանելով ՚ի ժամ քաղց-
րաբարբառ անսուտ բանի քո՝
առէք կերէք ին. և այլն.

* Ողջունին ․

Տէր մեր յս քս ․ որ ողջունիւն հրեշտակապետին քոյ գաբրիէլի՝ զախտակից բնութի մեր համբուրելով առ քեզ առնել միաւորեցեր ․ և զերկնաւոր խաղաղութի քո՝ հաշտութեան նշան առ հայր քո՝ երկնաւոր հրեշտակօք աւետարանեցեր ․ և զմիջնորմն մեղաց մերոց 'ի մէջ մեր՝ և հօր քոյ սէր՝ 'ի բաց հալածեցեր ․ Բա՛րձ 'ի սրտից մերոց զքէն նախանձուն որ առ եղբարս ․ և խաղաղացո ընդ մեզ ընդ հօր քոյ և քեզ և հոգւոյդ սբյ ․ զի սբ համբուրիւն ընդ միմեանս կապակցեալք՝ միով սրտիւ և կամօք զքեզ պաշտեսցուք ․ ընդ քեզ գովեսցուք․ և զքէն գոհացուք միշտ յաւիտեանս յաւիտենից ամէն ։

* 'Ի Սբ սուրբին ․

Սբ, սբ, և ամենասուրբ ․ բոլորովին սրբութիւն ես հայր



ան

անսկիզբն և անպատճառ։ Որ ըղ
ճառագայթ քո իմանալի դու արե
գակնդ՝ ՛ի յաւիտենից ծնար բան
և համագոյակից քեզ. և՛ի ժամա
նակի առաքեցեր զնա ՛ի փրկութի
մեզ. և նա ՛ի հաճութի քեզ զամ
կատարեալ տնօրէնաբար ՛ի սբ վեր
նատունն խորհրդոյ, զհաց մարմ
նոյն և զարիւն նորոյ ուխտին քեզ
՛ի հաշտութի նուիրեաց ասելով.
առէ՛ք կերէ՛ք զհացս զայս որ է
մարմին իմ. և արբէ՛ք զբաժակս
զայս, զի այս է արիւն իմ որ վս
ձեր և բազմաց բաշխի և հեղանի
՛ի թողութիւն մեղաց ՛ի խաչին.
Որդ՝ մեք ծառայքս քո՝ հաւա
տամք բոլորով սրտիւ. զի բերա
նով քհնայի փոխանորդի միածնի
քո արտաբերմամբ՝ սբ հացն և
բաժակն՝ է ճշմարիտ մարմին և ա
րիւն որդւոյ քո միածնի. զոր քեզ
՛ի հաշտութի, և՛ի քաւութի մե
ղաց մերոց պտրագի. Որ հայե
ցեալ անոխակալդ ած զաղաչանս

միածնի քո 'ի խաչին որ վն՟ մեր մեղուցելոցս, թէ հայր թող սոցա զի ոչ գիտեն զինչ գործեն. ըղ կամայ և ղակամայ զգիտութբ՟ և զանգիտութեամբ զպարտիս մե- ղաց մերոց թողցես. և զժամանակ ապաշխարութեան մեզ տացես 'ի կեանս այս. զի մի' կարօտասցուք յաւիտենիցն տանջանաց 'ի հան- դերձելումն. Ընդ քեզ ընդ որ- դւոյդ միածնի և ընդ հոգւոյդ սբյ՟ փառք յաւիտեանս ամէն.

* Աղօթք Կիրակէին.

Որպ՟ լուաք՝ սոյնպէս և տեսաք՝ և հաւատամք տր՟ յս՟ անսուտ բանի քո՝ արտաբերեալ բերանով քահանային 'ի դիմաց քո. զի որպ՟ դու զամ՟ ինչ արարեր բանիւ հը- րամանի քո, նոյնպէս ամենակա- րող բանիւդ զնիւթ հացին և գի- նւոյն, գոյափոխեալ 'ի մարմին և յարիւն քո. արա ուրեմն զմար- մին և զարիւն քո մեզ 'ի կեանս, և 'ի թողութի՟ մեղաց ամէն.

* 'Ի Հայր Երկնաւորին .

Հայր երկնաւոր՝ որ առաքեցեր զՄիածինդ 'ի փրկութ՟ի մեզ. և որպէս զաբրահամ եդեր յուսն իսահակայ որդւոյ քո յի՟ քի՟ ըզ խաչն սիրով քով. զոր հուրն 'ի ձեռին նր՟ նշանակէր. և սրով՝ որով զմահ նր՟ վ՟ մեր նկարէր։ Արդ դու տր՟ գթած և ողորմած. որ ոչ խնայեցեր յորդիդ քո միածին վ՟ մեր, մի՛ խնայեր վ՟ անպարտ արե՟ն նր՟ տալ զթողութ՟ի մեղաց մերոց. զշնորհս քո 'ի կե՟նս այս, և զփառս 'ի հանդերձելումն ամե՟ն։

* յՍուրբ Հոգի Երրորդ ժամուն .

Որդի Հ՟յ յ՟ի ք՟ի միակ տր՟ մեր և հովիւդ բարի. որ վ՟ կորուսեալ ոչխարացս քոց՝ թողեր յանապատին երկնից զանմոլար ոչխարս քո զհրեշտակս. և ածեր ածել 'ի տան աշխարհի զխաչ քո. և գտեր զոչխար քո և զպատկեր դրամիդ կորուսեալ. Այժմ է ժամ մեզ



ողոր

ողորմելոյ . և ցօղելոյ զարիւն քո
'ի պէտս հոգւոց մերս փրկութն.
քղր ցօղ արեանդ որ ցօղի 'ի քէն,
այդ մեզ 'ի բժշկութի է . Որ ծա-
րաւեցար 'ի խաչին յաղագս մերս
փրկութեան քամեցմամբ իբրև 'ի
սպնկոյ սբ մարմնոյդ արեան, յի-
շեա՛ զժամն զայն սարսռելի . և ան
տէր խօթացելոցս արա՛ զարիւն քո
օշարակ մեզ . և զսուրբ մարմին քո
մեզ 'ի հոգեկան թօշակ . 'ի թողու-
թն և 'ի քաւութն մեղաց մերոց .
ամէն .

* Հոգի այ յերգեցեալ ժամուն .

Ո՛վ ամենասբ Հոգի ճշմարիտ-
ած . Ճարտարապետ և յօ-
րինիչ ծիրանեայ արեան սրբու-
հւոյ կուսին 'ի մարմնանալ բանին
այ և քոյդ էակցի . Դու նոյն ա-
մենակարօղն ես տր , որ ընդ Հօր
և միածնի որդւոյ նր , միով ներ-
գործութբ և կարողութբ զհացն և
զգինին գոյափոխեցեր 'ի մարմին


և

և յարիւն ք͞ի յ͞ի տ͞ն մերոյ ։

Տո՛ւր զներշնչումն քո մեզ, զի զղ_
ջասցուք 'ի մեղաց մերոց . ծանի_
ցուք զաղտեղութի մաղձի յան_
ցանաց մերոց . և փոխեսցուք զնմ͞
օշարական շնորհի քոյ . և բաւա_
րասցուք վասն պարտուց մերոց։
ո՞չ զի աչալըջութե քեզ յանդի_
մա՛ն լինիլ կարասցուք զկնի մահ_
ուան մերոյ, զի դու ես ծախիչ մե_
րոցս մեղաց . և քո հալածին 'ի մէնջ
դունդք բելիարայ ։ Սրբեա՛ ըզ
մեզ, և տաճարացո՛ 'ի բնակութի
քեզ . զի սրբութե կեցեալ յայսմ
աշխարհի քոյդ օգնականութե և
ասպնջականութե շնորհի, և հան_
դերձելոցն բարեաց քո ժամանել
կարասցուք . Որ ես օրհնեալ ընդ_
հօր և ընդ որդւոյ ն͞ր միածնի յա
ւիտեանս յաւիտենից ամէն .

'ի Պահուն և փառաբանուն ընդ առեղն .

Տ͞ր մեր և փրկիչ յ͞ս ք͞ս . զո՞ր
օրհնութի և զո՞ր գոհութի



քեզ

քեզ մատուցանել կարեմք, եթէ ոչ
շքէն 'ի գոհութեն̃ խորհրդոյս գո
հանալով զքեզ փառաւորել։
Քանզի և դու յս̃ քս̃ յետ սրբա
զանի ընթրեաց վերնատանն՝ գո
հացեալ ելեր 'ի լեառն Ձիթենեաց
Քանզի պատրաստելով զսեղան
մարմնոյ քոյ և արեան յանդիման
նեղչաց մերոց դիմեաց, 'ի յօրինակ
մեզ սպառազինեալ՝ մարմնոյդ և
արեանդ ճաշակմամբ՝ մարտեար ը̃
չարին և յաղթեցեր։ Դու և ըզ
մեզ զօրացո տ̃ր յս̃ քս̃. զի մի՛ ըստ
յուդայի լիցի հաղորդութի̃ մեր
ընդ քեզ. այլ ըստ պետրոսի և ա̃յ
այլոց առաքելոցդ գթողաց և վե
րստին հաստատեցելոց. և անսայթա
քելի պահեա՛ զմեզ և յապագայիցն
անկմանց ամէն։

Ի յաւուր տօնախմբին Առաքելոց աղ̃թ.

Արդարև տ̃ր յս̃ փրկիչ մեր. դու
սքանչելապէս լուսատու ես
ամ̃ լերանց քոյոց սրբոց. այսինքն

հրեշտակաց, առաքելոց, վարդա-
պետաց, մարգարէից, կուսանաց,
մարտիրոսաց, ճգնաւորաց, և ա՟մ
ե՟նց քոց խոստովանողաց՝ զորս և
առ քեզ ունիմք բարեխօս: Ո՛վ ի
որք 'ի կեանս իւրեանց հաղորդ ե-
ղեն չարչարանաց քոց, և մրմռոյդ
և արեանդ ճաշակմամբ իբրև ա-
ռիւծք զհուր ցոլացուցին ը՟դ դէմ
չարին սատանայի, եղիցին յիշա-
տակեցեալք 'ի մ՟ջ պատարագիս.
զի ունիցին զհամարձակութիւն առ
քեզ վ՟ս մեր բարեխօսելոյ: Նո՛
որք լուսով փառաց քոց զքեզ տե-
սանել արժանացեալք են, նորա-
գոյն զուարճութիւն ուրախացելք՝
արդեամբ մարմնոյ քոյ և արեան.
'ի ժամ մ՟ծ պատարագիս՝ զուարճ
և խնդալի բերկրութիւն փոխան մեզ
և վ՟ս մեր՝ զերեսդ հօր ա՟յ թա-
խանձեսցեն 'ի կատարումն հայց-
ուածոց մերոց: զի արդարութիւն քո
և արքայութիւն յայտնի լիցի ա՟մ
աշխարհի. և մեք գտցուք զշնորհ


քո

քո 'ի թողութի մեղաց մերոց, և զփառս 'ի հանդերձեալ յաւիտենին ամէն ։

* 'Ի Սիոյն սուրբին ։

Սրբարար տր մեր և փրկիչ յս քս. դու միայն սբ ես. դու միայն տր ես ընդ հօր և հոգւոյդ սբյ 'ի միութե էութե մինդ յեր րորդութե. Սբ 'ի յղութե. սբ 'ի ծննդեան. սբ 'ի վերնատանն խորհրդոյ. սբ 'ի խաչին. սուրբ 'ի թաղման և յարութե. սբ 'ի համբարձման. և սբ 'ի միւսանգամ գալստեան ։ Օրհնեալ սբ է և անզրաւ յաւիտենին սբ եղիցի անուն քո ամէն ։

* 'Ի Սուրբ սուրբին ։

Հաւատամք տր՝ զի մարմնով զբանդ թաքուցեալ. այժմ զկենարար մարմին և արիւն քո՝ 'ի ներքոյ խորհրդական տեսակաց ծածկեցեր. անձեցո 'ի մեզ զհաւատ



առ'ի

առ՚ի կարել հաւատալ այսմ մեծի
թագուն խորհրդոյ։ Այսու կե
նաց հացիւ զկեանս մեր կազդու
րեա՛ գեր քան զմանանայն տուեալ
իսրայէլացւոց · զսոյս մեր աներկ
բայ ՚ի խոստացեալ երանութեանդ
հաստատեա · յարո՛ զմեզ ՚ի կեանս
այս ՚ի մեղաց մահուանէ · և յերկ
րորդ գալստեանդ զանկեալքս մահ
ուամբ յարո՛ ՚ի կեանս անվախճանս
և յերանականս ամէն։

* Ասեա տր շծղէւրքս քոյ

Ածր և տր մեր երևեցի՛ մեզ ·
արասցուք տօնս ուրախութ
մինչև յանկիւնս սեղանոյ · օրհնել
եկեալ յանուն տն։

* Առ օրհնեա զջնաբէ. և այլն։

Տր մեր և փրկիչ յս քս · չեմք
բաւական շնորհի քոյ զոր մեզ
արարեր · բայց ըստ մերս կա
րեաց օրհնեմք զքեզ, և դու օրհ
նեա՛ զմեզ։ Ած արա զմեզ ճշմար

 տու

տութի՟ն քո. զի քո բանդ ճշմար
տութի՟ն է. Ո՛վ լրումն եկեղեցւոյ
քոյ պահեա՛. զի մի՛ ոք ըստ յու-
դայի ելցէ ՚ի թուոյ ընտրելոց քոց.
Փառաւորեա՛ զմեզ անվախճան փա
ռօք քովք զոր ունէիր և ունիս
անկէտ յաւիտենից. և մի՛ թողուր
զմեզ. զի ՚ի քեզ անկաք յարգան
դէ եկեղեցւոյ. Ո՛վ խաղաղութի՟ն
քո շնորհեա՛ եկեղեցւոյ քում սբ՟յ.
որ՟ յետ յարութեան քոյ տալով ըզ
խաղաղութի՟ն և զողջոյն սբ՟ց առա
քելոցն ՚ի վերնատան. Ո՛վ ի ա՟մ
տուրք բարիք և պարգևք ՚ի հօրէ
քոյ ամենակալէ՝ քև ՚ի մեզ ծաւա
լեցան. Ը՟ որում օրհնեալ ես որդի
այ՟ և ընդ հոգւոյդ սբ՟յ յաւիտ՟նս
յաւիտենից ամէն.

* Ո՛վ ջնի վերինոյ Տ՟եառանին։

Դու Տ՟ր կնիք կենդանարար
հօրն անսկզբնականի. կըն-
քեա՛ ՚ի սիրտ մեր զհրամանս սբ՟յ
և անսուտ աւետարանի քոյ. և դիր
՚ի

'ի գլուխ իմացման մերոյ պսակ ա-
կամբք պատուականօք լցեալ զոր
անեստարան քո: Օ՛ օրացո՛ զիմա-
ցական աչս մտաց մերոց առ'ի հա-
ւատալ ամ գրեցելոց 'ի նմին: ըստ
հրամանի նր ընթանալով՝ բարե-
հաճոյս քեզ գտանիլ յամի ամէն:

*Յերանելոյ Յեկեղեցւոյ:

Տ՛ ողորմութի՛ք քո զհետ մեր
եկեսցէ. զամ աւուրս կե-
նաց մերոց բնակիլ մեզ 'ի տան
քում ընդ երկայն աւուրս:
Խնդրեցաք 'ի քէն տր զարքայու-
թի քո և զարդարութի յայտնել
ամ աշխարհի. իսկ զայլ ամ պի-
տոյս մեր որ ըստ հոգւոյ և մարմ-
նոյ, դու արդար վաստակով մեր
յաւելացո՛: Օ՛ ի անկարօտիդ այ՝
կարօտ ծառայքս յամի ծառայես-
ցուք. և'ի հանդերձեալ կեանսդ
ժամանեսցուք շնորհիւ քով. և
զքեզ ընդ հօր քոյ և հոգւոյդ սբյ
փառաւորեսցուք ամէն:

* Յերեկոյի Իններորդ Ժամուն .
'ի Խորհուրդ աւանդման Հոգւոյ
Տն Քրոյ 'ի Խաչին , և՛ի Խորհուրդ
ողբման խոցեցմանն .

Դու Տր մր Յս Քս . զմարդկայինս բնութիւն 'ի պատկեր քոյս բարե-րարութեդ 'ի վեցերորդի աւուրն արարեր՝ հաճեցար յարարածս ձեռին քոյ. և հաճոյական կամօք հանգեար 'ի նոր աւետակս առնելոյ : Նոյն և 'ի կատարման բոլոր տնօրէնութեն քոյ և 'ի փախման չարչարանաց քոց՝ մահուամբ հանգեար 'ի վր խաչին. և ընդ հոգւոյդ քոյ աւանդման 'ի ձեռն Հօր քոյ ան-ընկճընականի, և զհոգիս մարդկան յաւանդ ընծայեցեր նմա . զոր և կանխաւ ասացեր. Թէ ոչ ոք կարէ զոչխարս իմ յափշտակել 'ի ձեռաց Հօր իմոյ : Նա ղաչեմք զքեզ Տր՝ ամփածածուկ աջով քով տուր

'ի պահեստ զհոգիս մեր 'ի ձեռն
հօր քո երկնաւորի։ Եւ՛ որ կըն
քեցար 'ի նորափոր վիմի գանձ-
անկողոպտելի՝ կնքեալ զմեզ նըշա
նաւ խաչի քո. ով զի ե̅ որդւոցն
իսրայելի՝ կոտորիչ անդրանկացն
եգիպտոսի՝ մի մտցէ 'ի տուն հո-
գւոց մերոց որ դրոշմեցեալ է ա-
րեամբ գառինդ խորհրդոյ։

Դու ած մեր և տր՝ ո՛չ շատացար
'ի խաչին ծարաւիլ մերս փրկութե.
այլ և զկնի աւանդման ամենամա
քուր հոգւոյդ 'ի ձեռն հօր քո ա̅
բնութե, և մեր ըստ շնորհի, ըղ
դուռն սրտի քո զկողդ՝ եռուր 'ի
խոցումն տիգի. յորմէ կայլակեալ
վտակացուցեր զարիւնդ անապա-
կան մեզ 'ի յարբումն. և զջուր
կողիդ քո մեզ 'ի լուացումն։

Դու յս զգլուխդ խոնարհեցու-
ցեր՝ 'ինչան համբուրելոյ զմեզ. ըղ
ձեռքդ տարածեցեր՝ 'ինչան գրկա
ածելոյ. և զկողդ բացեր՝ 'ինչան
զմեզ սիրելոյ։

 Որդ

Ո՛րդ և մեք անարժան և մեղա-
կիր ծառայքս քո ՚ի ժամուս
այսմիկ՝ յիշեմք զանչափ բարերա-
րութիւնս քո. և զնոյնս քեզ ՚ի նուէր
ընծայեմք. Մի՛ ի մեզ տէր մի՛ մեզ.
այլ անուան քում և անապական
չարչարանացդ տուր զփառս. Թէ
և ոչ ՚ի մեզ, հայեաց ՚ի սարսուելի
կիրս չարչարանաց քոց. յիշելով
զօրն և զժամն սոսկալի. զցաւս քո
անտանելի. Արուամ և խմանալիքը
և զգալիք և տարերք ամէն չկարե-
լով հինդուրժել չարչարանաց քոց՝
զփախստեան տեղի խնդրէին. և
զմերկութի արարչիդ՝ զգալի խա-
ւարաւ սքօղել ծածկէին. և իբր
զմագաղաթ գալարէին. Պահե-
ցեր ՚ի քեզ տէր մեր յս քս զնշան
աւուրն այնմիկ սոսկալւոյ ՚ի խը
թան քեզ զարթուցիչ առ՚ի գթու-
թի և յողորմութի ՚ի վր մեր. և
հեղուսեալ բևեռօքն ՚ի ձեռս քո
և յոտս՝ անհերքելի և անջրելի
կերպիւ զմեզ կապեցեր անթարթ


նշան

նշան 'ի ձեռին քո․ Տուր զի՛նչ ունիմք մեք նշան հաշտութե՟նդ ընդ մեզ, եթէ ոչ յիշել զօրն թաղմանդ քո և խոցեցմանդ 'ի խաչին․ որո՟վ զի յիշեսցես զուխտ քո գրեցեալ արեամբ քով, և մեզ ողորմեսցիս․ ըստ մեծի առատաձիր գթութե՟նդ․ Որ ընդ հօր և հոգւոյդ ս՟եյ յո-ղորմութ՟ենդ միշտ փառաւորեալ երկրպագիս յաւիտեանս յաւիտե-նից ամէն․

*Ի խաղաղական ժամուն 'ի տօնս իջմանն Ք՟սի 'ի դժոխս․

Համատարած լոյսդ անըստ-ւեր յ՟ս ք՟ս փրկիչ մեր․ որ ո՛չ շատացար զընակեալս յերկրի լուսաւորել, այլ և մեռելոցն հո-գւոց կամեցար այց առնել․ ասե-լով կապելոց թէ ելէ՛ք․ և որք 'ի խաւարիդ էք յայտնեցարո՛ւք․ Դու տ՟ր լոյս մեր և կեանք․ մեք յուսամ՞ք երկիցուք․ մինչ եմք 'ի ներքոյ պաշտպանութեան քո ա՟վ


զմեզ

զմեզ կողոպտել կարասցէ. Եթէ
անողորմն սատանայ զմեզ վիրաւո
րեսցէ, դու ես բժիշկ մեր.
Եթէ զմեզ ցրուեսցէ, մոլորե-
ցուսցէ և կորուսցէ, դու ես ժո
ղովիչ մեր. դարձուցիչ և գտիչ
մեր. Եթէ զհոգիս մեր 'ի շնոր-
հացդ զրկելով մահացուսցէ, դու
ես կենարար մեր. Տ̃րյ և մեք
ընդ նահապետաց, մարգարէից և
արդարոցդ 'ի քէն փրկեցելոց ա-
սասցուք. տ̃ր ա̃ծ մեր, մեք 'ի տը
ըընջենի կենաց մերոց առ քեզ
կարդացաք, և 'ի գիշերի բանտից
կապանաց մեղաց մերոց առաջի քո
եմք. Ուրեմն գիտասցեն հեթա-
նոսաբարոյ դևքն, զի դու ա̃ծ ը̃
մեզ ես. հզօրաջ̃ւքն պարտեսցին,
և 'ի զօրանալն ընկճեսցին. զոր
ինչ և չար խորհին վ̃ս մեր, դու
ես խափանիչ խորհրդոց նց̃. յեր
կիւղէ նց̃ մեք ոչ երկիցուք՝ զի դու
ա̃ծ ը̃ մեզ ես. Դու մեզ լեր յեր
կիւղ. մի՛ խոստացու̃նք զախտս մեր


չեր

չերկնչիլ 'ի քէն. այլ բեւեռեա՛ ըզ
սիրտ մեր յերկիւղ քո. զի 'ի դա
տաստանաց քոց երկիցուք: Ժողո
վուրդ քո նստեալ 'ի խաւարի՝ ե
տես զլոյսդ իմանալի. և մեզ որ
նստիմք 'ի մեղացն տղմի՝ լոյսդ ան
ըստո՛ւեր մեզ լիցի պահապան և
հովանի: Զգիշերս 'ի մէնջ անցո՛
անխռով և անսասանելի. և յա՛մ
սատանայական խռովութեանց խաղա
ղացո՛ զմեզ անցասումն և անվըր
դով բարի. ամէն:

(Ասէ՛ յեկեսցէ ժամուն ննջման
զվերոգրեալ աղօթս ասա՛ ո՛վ
բարեպաշտ՝ հանդերձ հայրմերիւ
և հրեշտակական ողջունիւն ո՛րքան
և կարես և ո՛ղջ լեր 'ի տր.)

* Յորդորանօք յաւելեալ պապէ հը ռոմայ հայրապետի առաջեալ Բենեդիկ տոսի. որ ներէ իմն գուրծ ընդհանրական և շնորհաւ՝ եղաւ տար. Եթէ խոտին ՚ի տեղ մը պաշտօնին ՚ի ժամ մահուն ասացէին տասնէին.

Առաջի աչաց քոց տրունականաց՝ զմերս յանցանս զըղջմամբ հրատարակեմք. և զվէրս զոր ընկալաք ՚ի հոգիս՝ պատկառանօք հանդերձ խոստովանիմք. Եթէ խորհեցիմք զչարիս զորս գործեցաք, սակաւ է պատիժն յորում տագնապիմք. և շատ է վնասն իմ պարտաւորիմք. Ծանրագոյնք են զորս ճնարեցաք, և թեթևագոյնք են որց ըմբերեցաք. Զգամք ՚ի մեզ զպատուհաս մեղացն, բայց ըզ կամակորութի մեղանչելոյն ոչ հերքեմք ՚ի բաց. ՚Ի ձաղմունս արժանահաս հաշեալ նուաղի մերն տըկարութի, բայց անխրատութի մեր տակաւին ոչ դիմէ ՚ի զգաստութի.

 Մ՚իս

Միտ մեր խոթացեալ շաղագու-
նայէս խոնարհի յերկիր, բայց պա-
րանոց մեր խստացեալ ցարդ ոչ
մեղմանայ. Կեանն մեր 'ի մէջ ցա-
ւոց անկեալ հառաչէ, բայց 'ի գոր-
ծոց անպատեհից ոչ ապաշաւէ.
Արդ՝ եթէ ներիցես մեզ՝ ոչ ըզ-
գաստանամք. իսկ եթէ խնդրիցես
զվրէժն՝ անհանդուրժանամք.
Խոստովանիմք 'ի կշտամբանս քոյս
զորս գործեցաք. և մոռանամք ըզ-
կնի զննութն քոյ՝ զոր նախ ող-
բացաք. Մինչ կարկառես զբա-
զուկ քո՝ խոստանամք զբարիս. և
մինչ ամփոփես՝ զնոյնս ոչ կատա-
րեմք. Մինչ հարկանես զմեզ՝ ա-
ղաչեմք զի անխայիցես. և մինչ
խնայես՝ դարձեալ տամք զտեղի զի
բարկանայցես. Առաջի քոյ կամք
յանդիման խումբք մահապարտացս
երկնչելով 'ի ջնջմանէ թարց քոյոց
ներմանց. Շնորհեա՛ ուրեմն ով
հայր գթած՝ քոյոց ստեղծուածոց
յանուն որդւոյ քոյ միածնի ըզ-
լսումն հայցուածոց ամէն.

* Ծանուցումն ոմանց խորհրդոց .

Ի վախճան աղօթական և եր-գական բանից ծանի՛ք սի-րելիք մեր 'ի տէր՝ զի յորժամ ըն-ծայքն վերաբերին 'ի սրբասացու-թեան ժամու, և քահանայն պատա-րագիչ ընկալեալ 'ի ձեռաց սար-կաւագին խաչակնքէ, Տեսանեմք զանխոհեմ ջերմեռանդութիւնս. բաղխմունս կրծից . և թէ, խոս-տովանիմք և հաւատամք . և տա-կաւին իրն 'ի կատար ոչ ժամանել, պարզամտութեան զկատարելոյ տան ոմանք զպատիւ. Իսկ կամ յողջոյ-նին՝ զողջոյնն ընկալեալ փութով երանեն յեկեղեցւոյ՝ իբր թէ վասն զընթրիսն 'ի միասին ուտելոյ հաշ-տին, և տակաւին չկերեալք 'ի մի-մեանց բաժանին. Իսկ այս զի՞նչ է եթէ ոչ զստուերն տակաւին նա-խատել և իրական խորհուրդ գոլ հաւատալ. զի այնք արարողութիւնքն



և

և բանքն՝ են իբրև ապառնի նա-
խագուշակութիւնք եղանելոյն և ոչ
եղելոյն ։ Որպ՟ և ոմանք մարգա-
րէութիւնք ․ որք զկնի բազմաց դա-
րուց կատարեցանն՝ իբրև անցեալք
և ներկայք գուշակին 'ի մարգա-
րէից․ ըստ այնմ ահաւասիկ տէր
եկն բիւրօք զօրօք հրեշտակօք ։
և թէ՝ զթիկունս իմ ետու 'ի հար-
ուածս ․ և զերեսս իմ յապտակս ։
զի մարգարէքն այսպիսի լուսով
լուսաւորեալք՝ յայտնութ՟ն ա՟յ
զհեռաւորսն իբրև մերձակայ մը-
տօք տեսանէին․ և որպ՟ թէ արդէն
իսկ եղեալս գոլ նկարագրէին զն՟ս
անսխալապէս եղանելեացն ։
Նմանապէս և 'ի յընծայաբերու-
թեանն՝ ապառնի յուսով պարտին
բաղձանք և ջերմեռանդութիւնք ․
ըստ օրինակի մարգարէիցն նկատ-
ման և ոչ իբրև եղեալք․ Որպ՟
և մինչ աւր յողջունին՝ ք՟ս 'ի մէջ
մեր յայտնեցաւ ․ և թէ՝ ողջոյն
տուք միմեանց, այն է նախապատ-


րաս

րաստութի իմն առժամանակ կա_
տարելութեն առէք կերէքին . և
ազդումն ինչ հրեշտակական աւե
տարանութեն 'ի ժամու ծննդեանն
քի . որպ զի հաշտելք ընդ միմեանս
նշանակաւ մբ համբուրին և խա_
ղաղանալոյ , 'ի կոչմանն առէք կե
րէքին և այլն , հաշտ և համբոյրք
գտանիցիմք երբ խորհուրդն առ_
նու զկատարումն . Ուստի 'ի վե
րաբերիլ մբ ընծայիցն , պահելիք
են այնք ջերմեռանդութբն 'ի ժա
մու առէք կերէքին , և արբէք 'ի
սմանէ այս է արիւն իմ ասացեալ
բանիցն . զի մի' իցեն սոսկ նիւ_
թոցն երկրպագութք . և կամ իբր
յեղանելին' ունել զիղձս և զբաղ
ձանս իբրև յեղեալ . Այս բանա_
կան է յընծայաբերութեանն և
յողջունին ասել զգրեալ աղօթսն
Այս 'ի ժամու առէք կերէքին ,
այս է մարմին իմ . արբէք 'ի սմանէ
այս է արիւն իմ , նոյնպէս ասել
զգրեալ աղօթքն ։



Իսկ

Իսկ որք նախ՟ք զառէք կերէքն
եղանեն յեկեղեցւոյ, նոքա սոսկ
անդանոյն հաղորդին․ սուրբերա՟
հացին յագեցե՟լք հաւատան, և յիս
կականին կատարելուէ զոկին․ ըզ
շուքն նախատիպ համարին․ և հո-
գւով սկսնելք՝ մրմնով վախճանին։
Ողբալով ասեմ․ թէ վատթար քան
զյուդա․ զի նա յետ ընկալման
խորհրդոյ ել արտաքս ՚ի մատնել․
և սոքա զնիւթս սոսկ՝ իրական
համարեալք․ որում սպասէինն ոչ
համբերելով կատարմանն։ Ոսկւոյ
յուսային․ և պղնձով իբրու ոս-
կւով փարթամացեալք, զայն առ-
նուն ըստ իւրեանց հաւատոյն և
արտաքս եղանեն։ Արթան նոքա
ըստ իսրայէլացւոց յօրէնս արդա-
րութե՟․ և յօրէնս արդարութե՟
ոչ ժամանեն։ Ուստի աղաչեմ
զամենդ․ գոն է տեւել յեկեղե-
ցւոջ մինչև ցաւարտումն առէ՛ք
կերէքին․ զի թերևս ՚ի ծագման
արեգական, դուզնաքեայ լուսով



ա-

արեւուն լուսաւորեալք, մի՛ ան֊
մասն եղանիցէք ՚ի լուսոյ նր․ եւ
մի՛ արուսեկին ծագմամբ՝ իբրու
զարեւն տեսեալք պանծասջիք․

Իսկ եւ քաղցրաձայն դպրացդ որ֊
դւոց մերոց ՚ի քս պատուիրեմ․
զի թերեւս զայն աղօթականսն ՚ի
պատիւ սրբոց յօրինեալս ՚ի մէնջ՝
սերտիցէք․ եւ ըստ պատշաճի ա֊
ւուրն՝ զմի մի ՚ի նշնէ ՚ի տեղւի ժա֊
մամուտի ասիցէք․ Ո․ այլ եւ վար֊
ժից քննայից եւ դպրապետաց֊
տղայոց հարկադրեմ․ զի զկնի սաղ֊
մոսի ընթերցմանն՝ զգիրքս ՚ի բե֊
րան սերտել տայցէք տղայոց ՚ի
փառս այ եւ ՚ի պատիւ
սբց նր․

Ա․ Ե․ Ր․ Դ․

*Յիշատակարան Տպողաց.

Շնորհիւ ամենազօր Երրոր_
դութեն և միոյ Ածութեն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ,
Յանկ ելեալ աւարտեցաւ տպումն
Նորաշար գրքիկանս աղօթից և ժա
մամուտից ՚ի փառս այ.

Որ յօրինեալ արարաւ երկասի_
րութբ աշխատանաց Տեառն Յա_
կոբայ Նծարեան Վարդապետի՝
Մեծի Պորբդի Կոստանդնուպօլ_
սոյ՝ ՚ի յօգուտ հասարակաց ման_
կանց եկեղեցւոյ.

Արդ՝ ով սրբասնեալ մանկունք
սբյ սիօնի. ճանաչելով զվաստա_
կաւորն ձեր՝ (զմերօգրեցլ զվեհն
ասեմ գերյարգելի) մի՛ մոռանայք
զերախտիս նր. յիշելով զինքն և
զհուրայինսն սմ, զմարմնաւոր և րզ
հոգևոր ծնօղսն առ Տր ՚ի մա_
քուր մաղթանս ձեր.

Յիշեսջի՛ք եւ՝ զբժիշկ տրց~ կա րապետն խոհեմագոյն. զխնդրօղ սորին 'ի վեհէն պանծալւոյ. որ միրահարեալ աղերսանօք՝ ետ յօրի նել զսա. տալով և զծախսն տը պագրման. աւ'ի լինել յիշատակ հո գւոյ իւրում և ծնողացն իւրոց. հանգուցլ հօրն ախթէր ովանէ~ սին ; և կենդանի մօրն հիւրիէին. և նորաբողբոջ որդւոցն՝ պօղոսին, պետրոսին, և յօհաննիսին.

Որ եթէ այս գրքուկ՝ սիրով ընկա լեալ լիցի և փութով վերջասցի, (որպ և յուսամ) ունի 'ի մտի և զայլ ինչ գիրք 'ի շարադրեալ Տե~ եանց մեծի Վրդպետին՝ տալ տը պել 'ի փառս այ. և'ի պայծառութ սիոնի և մանկանց նորին բանա~ սիրաց. զորոյ զմիտն բարի՝ ամցւն շնորհեսցէ տր. Քանզի՝ սոյն սա ոչ միայն դպրաց եկեղեցւոյ է պի տանի, այլ գրեթէ ամենից անձանց հաւատացելոց 'ի քս է պիտանա~ ցու. մինչ սերտել հարկաւորէն ըղ



յօ

յօրինեցի աղօթս իւրաքանչիւրս՝ առ՚ի համաձայնիլ Աղօթից եկեղեցւոյ. Յիշեսջի՛ք և զմի պատճառն տպագրութեան սորին. Է որս և զաշխատաւորն գործարանիս՝ զտէր Միքայէլի որդի՝ զտիրացու գրիգորն վանցի. Մա̄ զի աշխատօղք հոգեւորացն՝ ոչ միայն ՚ի մարմնաւոր արդիւնն հայիլն, այլ հոգևորին ակնունին. զի եթէ այդպէս ինչէր, այն իսկ լինելով վարձն նց, ՚ի հոգեւոր վարձուցն անմասն եղանէին. այլ այն է իբրու ապրելիք ինչ մի մարմնոյ. որով կազդուրեալ մարմինն՝ հանգոյն դեղօք վարողաց՝ կարողանայ զհոգևոր գործոյ ըզ պաշտօնն առեզրել. ոպ երանելին պօղոս ազդ առնէ ՚ի գիրս կորնթացւոց և յայլ թուղթս իւր. Օ որ Տ̄ն ա̄մ՝ որ յաջողէ զա̄մ հոգեւորս յա̄մ՝ շնորհեսցէ միշտ ըզ նոյնս խորհիլ. խօսիլ և գործել.

և նմա փառք յաւիտեանս

ամէն.